ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԽՉՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մխչյան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Մխչյան, /0235/6-00-48, mkhchyan1@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 դեկտեմբերի 2012թվականի N 30

ՄԽՉՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013Թ.-Ի ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ և ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Առաջնորդվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 18 կետի պահանջներով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Մխչյան համայնքի 2013թ.-ի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը համաձայն հավելվածի:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՐԳԱՄ
2. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՌԱՖԻԿ
3. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՍԱՐԳԻՍ
4. ԳՈՒԼՈՅԱՆ ՀՐԱՅՐ
5. ԴԱՆԻԵԼՅԱՆ ԱՐԱՅԻԿ
6. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՏՅՈՄ
7. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԱԼԲԵՐՏ
8. ՄՈՎՍԻՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

Գյուղապետ ԽԱՉԻԿ ՊՈՂՈՍՅԱՆ

հավելված

ՄԽՉՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013թ.-ի ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ և ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի , շինությունների(ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝
հիմնական օբեկտների համար՝
ա) մինչև 300 ք.մ. ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների , ինչպես նաև մինչև 200 ք.մ. ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար ----------15000 դրամ .

բ) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտի համար՝

բա) 201-ից մինչև 500 ք.մ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար----------30000 դրամ.

բբ) 501-ից մինչև 1000 ք.մ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար ----------50000 դրամ.

բգ) 1001-ից ավելի ք.մ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար----------70000

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ) մինչև 20 ք.մ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝----------3000 դրամ.

դ) 20 և ավելի ք.մ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար----------5000 դրամ.

2.Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման , արդիականացման , աշխատանքների (բացառությամբՀայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝----------3000 դրամ.

բ) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների , վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրուքաչափի, կիրառում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքի գործառնական նշանակության փոփոխության մասով.

գ) նախատեսվում է միայն կցակառույցների , վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարության կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրոնքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3.Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է ----------5000 դրամ.
1-ին, 2-րդ և 3-րդ կետերով սահմանված դրույքաչափերը հաշվարկվում են 0.5 գործակցի կիրառմամբ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝------ 2000 դրամ.

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար----2000 դրամ.

5. Համայնքի տարածքում՝
ա) բացօդյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար՝ ----------350 դրամ.

բ) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է ---------- ----------150000 դրամ:

գ) խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ ---------- 30000 դրամ:

6.Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները),խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

ա) առևտրի օբյեկտների համար----------50 000 դրամ.

բ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար----------50 000 դրամ.

գ) բաղնիքների /սաունաների/ համար ----------300 000 դրամ

դ) խաղատների կազմակերպման համար----------1 000 000 դրամ.

ե) շահումով խաղերի կազմակերպման համար---------- 500 000 դրամ.

զ) վիճակախաղերի կազմակերպման համար---------- 150 000 դրամ:

8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝---------- 2000 դրամ.

բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝---------- 3500 դրամ.

գ) այլ արտաքին գովազդի համար՝----------1000 դրամ.

ե) դատարկ գովազդային վահանակների համար՝---------- 700 դրամ:

9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեներ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել---------- 1000 դրամ:

10. Համայնքի տարածքում (բացառությամբ թաղային համայնքների) մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել----------3 000 դրամ:

ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

1) Բնակչի պահանջով սեփականշնորհված , տնամերձ կամ պահուստային հողերը չափելու համար,որպես վարձավճարի չափ սահմանել----------1000 դրամ

2) Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցներից վճար---------- 1000 դրամ:

ՄԽՉՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Խ. ՊՈՂՈՍՅԱՆ